ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

13.09.2024 N 02-423

«ՍՏԱՏՈՒՍ ԹՐԵՅԴԻՆԳ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Վ. ԹՈՐՈՍՅԱՆԻՆ
(ք. Երևան, Մայիսի 9, 30/1
էլ. փոստ movsessian@mail.ru)

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդի միջոցով կազմակերպված «ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/64» ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում թիվ 41-42 չափաբաժինների մասով առաջին տեղ է զբաղեցրել «Ստատուս Թրեյդինգ» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Ստատուս Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էին որոշակի անհամապատասխանություններ. մասնավորապես՝ հայտով չի ներկայացվել հավելված 1.3-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարության ձև/, դիմում հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չի եղել թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 41-րդ հոդվածի պահանջով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: «Ստատուս Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել շտկված

փաստաթղթերը, և համաձայն կարգի 42-րդ հոդվածի պահանջներին, մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,»*** ենթակետի պահանջները, ընդունվում է որոշում ***«Ստատուս Թրեյդինգ» ՍՊԸ***-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ գնումների համակարգող
Դ. Մադոյան, հեռ.+374 93 02 34 01